

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ  
(ՌՈՐԵՐՏ ՍՈՒՋԻԼԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՐՈԿ)**

**Ա. Վ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

***Ճշմարտությունը բյուրեղ չէ, որը կարելի է խցկել  
ինչ-որ մեկի գրպանը, այլ մի անվերջանալի հորձանք,  
որի մեջ ընկնում ես գլխապարտառ խոյանքով:***

**Ռոբերտ Մուզիլ**

Ավստրիացի մեծանուն գրող Ռոբերտ Էդլեր ֆոն Մուզիլը ծնվել է 1880 թ. նոյեմբերի 6-ին Ավստրո-Հունգարական միապետության Բլազենֆուրտ քաղաքում (ներկայիս Ավստրիայի Հանրապետության Կարինթիա երկրամասի մայրաքաղաքը), կաթոլիկադավան հոր՝ ինժեներ Ալֆրեդ Մուզիլի և Հերմինեի (Բերգաուերի) ընտանիքում: Հայրը սերում էր տոհմիկ ավստրիական ընտանիքից, մոր նախնիները Բոհեմիայի գերմանացիներ էին:

Ռոբերտ Մուզիլն ապրել և ստեղծագործել է Ավստրո-Հունգարական 600-ամյա կայսրության հզորության և փառքի, 1918 թվականին նրա փլուզման, մեկ տարի անց՝ Հանրապետական Ավստրիայի հռչակման և 1938-ին վերջինիս Գերմանական Երրորդ Ռայխին բռնակցման ժամանակաշրջանում, 20-րդ դարի երկու աշխարհամարտերի միջնահատվածում:

Ավստրիայի և Գերմանիայի մշակութաբանական մույնության ընկալումը, ապա և հասարակապետական այս երկվորյակ միավորների քաղաքական միությանը հասնելու մուզիլյան իդեալը ոչնչացվեցին իր իսկ աչքերի առաջ: Ավելին, նրա զույգ հայրենիքների վարած ինքնակործան և արտաքին ախտյան տերությունների կողմից ինչ-որ իմաստով նրանց պարտադրված քաղաքականության հետևանքով ավստրոգերմանական ցանկալի միության զույգ բաղադրիչները առանձին-առանձին և միասնաբար խորթացան գրողի հոգում՝ դառնալով «հոգեխորթ օտարներ», իսկ 1919 թ. Գերմանիային և Ավստրիային պարտադրված Վերսալի հաշտության ստորագուցիչ պայմանագիրը, ըստ Մուզիլի՝ որպես նորօրյա «տրոյական հաղթանակի» խորհրդանիշ, վերջնականապես սպանեց նրա մեջ հույսը նաև Անտանտի ժողովուրդների՝ եվրոպական երկրների ու Միացյալ Նահանգների ողջախոհության հանդեպ:

Մուզիլի ստեղծագործությունը բացառիկ տեղ է գրավում 20-րդ դարի գեղարվեստական մտքի և ընդհանրապես մտքի պատմության մեջ: Մուզիլի գրական վաստակի նկատմամբ ողջ աշխարհում հարաճուն հետաքրքրությունը պայմանավորված է ո՛չ միայն և ո՛չ այնքան նրա ստեղծագործական անկրկնելիության երևույթով, այլև՝ որ գրողի արժարժած համամարդկային հնչեղություն ունեցող, հավերժության ծիրին բաղիյուսված գաղափարներն ու մտահոգությունները առավելագույնս նպատակաուղղված են վերլուծելու, ի ցույց դնելու ժամանակակից մարդու «գիտակցության աշխարհը»: Սա՛ է, որ մշտապես թարմություն է հաղորդում մուզիլյան արձակին ու հետաքրքրական դարձնում պատումի ամենադժվարամարս տե-

դիներն ու բազմաբարդ ծայքերն անգամ:

Մուզիկի երկերը դժվար են ընթերցվում, և, ընդհանրապես, ինչ նյութի որ նա դիպչում է՝ այն դառնում է բարդ, նույնիսկ՝ բազմաբարդ, բայց ո՛չ երբեք խրթին: Սակայն այդ բարդություն կոչվածը ինքնանպատակ չէ. սա այն բարդությունն է, որ ասելիքի խորությունից է ծնվում: Մուզիկը խորությունը թաքցնում էր մակերևույթին:

Մուզիկի ստեղծագործությունն աչքի չի ընկնում դեպքերի զարգացման հետևողական հոգեբանական պատճառաբանվածությամբ, դեղատոմսային վերջնալուծումներով, սուր ու գրավիչ սյուժեներով, որովհետև այստեղ ողջ գործողություն կոչվածը տեղի է ունենում բուն իսկ գիտակցության ոլորտներում, ուր և արտացոլվում ու իրենց գեղարվեստական մեկնաբանությունն են գտնում կյանքը խորհրդանշող բազմազան առեղծվածային իրողությունները: «Ներքին հայացքի» մուզիկյան այս աշխարհատեսության կերպը պայմանավորել է նրա ստեղծագործությանը բնորոշ մենախոսական բնույթը:

Գրողի ստեղծագործություններում կենսական փաստի մատուցման երկու կարևորագույն սկզբունքային միավորներ գոյություն ունեն՝ իրականություն և հնարավորություն: Գրողի գլխավոր ձգտումը իրականության կարգը հնարավորության կարգով փոխարինելն է, ընդ որում՝ առաջինը երկրորդի աղճատված արտապատկերումն է, ուստի իր տեղը պետք է զիջի ցանկալի ակնկալիքին, աշխարհիս երեսին պիտի վերահաստատվի իրականացված հնարավորության (կամ՝ Արիստոտելի բնորոշմամբ ասած՝ «էնտելեխիալ սյոտենցիայի») տեսականը: Այս առումով գրողի մոտ կարևորվում է «փոփոխություն» հասկացությունը. ձգտելով փոխել մարդուն՝ դրանով իսկ նա ցանկանում է վերափոխել աշխարհը: Այս իմաստով՝ մուզիկյան աշխարհայեցողական համակարգում կենտրոնական հասկացությունը *ուտոպիան* է, իր իսկ բառերով ասած՝ «այլ կացությունը» կամ «այլակեցությունը», կարճ՝ «այլությունը», որ դառնում է նրա կյանքի գլխավոր ստեղծագործության՝ «Մարդն առանց հատկությունների» վեպի փիլիսոփայական գերխնդիրը:

Ուսումնասիրողները միաբերան պնդում են, որ 20-րդ հարյուրամյակի դարակազմիկ վեպն այլևս ո՛չ Թոմաս Մաննի «Կախարդական լեռն» է, ո՛չ Ֆրանց Կաֆկայի «Դատավարությունը», ո՛չ Ջեյմս Ջոյսի «Ուլիսը», ո՛չ էլ Մարսել Պրուստի «Ուրունումները», այլ այն մեծաշուք, «բաց» ստեղծագործությունը, մառախլապատ Մայր տաճարը, որ հղացվել է երևակայությունից ու գիտակցությունից, հոգեբանությունից ու մետաֆիզիկայից, քաղաքականության ու խորհրդապաշտության շաղախից. «Մարդն առանց հատկությունների» փառահեղ, ինչպես հյուսիսային արևը և զգլխիչ, ինչպես հրավառությունը:

Մուզիկի ստեղծագործություններում իրականության մատուցման տեսականացված մտակառույցները հաճախ ցրում են նրա երկերը որպես զուտ գեղարվեստական գրականություն դիտարկելու ընթերցողական նախատրամադրվածությունը, դժվարացնում նրանց ընկալումը որպես այդպիսին: Ամփոփիչ բանաձևումների, տպավորիչ «մեծավերջ» լուծումների արվեստագետ չէ Մուզիկը, նրա գրողական գլխավորագույն հատկանիշը անընդհատ ու գերլարված որոնումն է, նրա *տարերքը* ոչ թե հակադրությունների արհեստական հաշտեցումն ու ներդաշնակեցումն է, այլ հակասական ու իրարամերժ հնարավորությունների վերաիմաստավորումն ու դատողական ընդունակությունների բազմահանգույց կծիկը՝ ընդհուպ մինչև իմացականության դաշտի անթուլատրելի, վտանգաշատ սահմանները բացելու ու բացահայտելու *անհավակնոտ հավակնությունը*: Նման հակադրություններով գործառելու հետևանքը հաճախ լինում է այն, որ վերջիններս կրկնակի, բազմակի անգամներ ավելի անհաշտ ու անհանդուրժող են դառնում. թո՛ղ որ այդպես, միայն թե

չկորսվի իրերի էությունը մերձենալու մարդու դատողական ու զգայական պահանջումներին մշտահմա թելը:

Այսպիսով, Մուզիլի *գեղարվեստական ու փիլիսոփայական համակարգում երևույթների գնահատման և չափման միավորը ժամանակակից մարդու գիտակցությունն է*, ընդ որում՝ այդ գիտակցություն կոչվածը փորձության է ենթարկվում ներքին պառակտվածության ու ինքն իր հետ անհաշտ մտերմության գահավեժ կտրվածքով: Գրողին հետաքրքրող մարդկային տիպն առաջին հերթին *«հոգիներն անդամահատող»*, *«տղեղի ապագա մարդն է»*, *«սեփական օրգանիզմը մանրադիտակի տակ զննող բնախույզ գիտնականը»*: Նա քննում է մարդու ու մարդկայինի այն կիզակետը, ուր իրար են հանդիպադրվում *բանականությունն ու բնագրը՝ միտքն ու հոգին* պեղող, ճանաչողության դաշտում երկհեծան իշխող դատողական ու զգացական գուգադիր սկիզբները: Լինելով մաթեմատիկոս և ինժեներ՝ Մուզիլը նպատակ էր դրել *«մաթեմատիկան» միահյուսել «պոեզիայի» հետ, բանականությունը՝ բնագրի:*

Բայց մի բան է՝ ինչպես պատմել ժամանակակից մարդու հոգուերի ու ապրումների մասին, բոլորովին մեկ այլ բան՝ դրանց լուծման եղանակները քննելը: Այս իմաստով՝ Մուզիլի մեծագույն արժանիքը թերևս այն է, որ նա չի խաբվում *գեղագիտականի ու բարոյականության սահմանների խնդրում*, որոնք *միասնական են հանդես գալիս նրա ստեղծագործություններում*: Նա քննում է *գոյաբանական և իմացաբանական խնդիրների ամբողջությունը՝ գեղագիտականի ու բարոյականության փոխսերտաճած, անբակտելի շաղախի դիտակետից*:

Գրողին անհանգստացնում է ո՛չ միայն և ո՛չ այնքան ոճական, որքան *էկզիստենցիալ խնդիրը*: Սակայն *«հոգու սահմանային վիճակների»* պատկերման սկզբումը ևս լիակատար կերպով չէր բավարարում նրան, ավելի շուտ՝ այն նրա կողմից որպես վտանգավոր ու ճակատագրական արկածախնդրություն էր գիտակցվում, որն ի վերջո հանգեցնում է *«դատապարտվածության ու անելանելիության անսահման զգացումի»* գաղափարին, որն էլ համակում է բոլոր այն մարդկանց, ովքեր համարձակվում են *«սահմանային գոտուց»* ներս թափանցել:

Նույն չափանիշներն են ընկած մարդկային փոխհարաբերությունների, սիրո, գեղարվեստի, բնական ու հասարակական երևույթների, նաև բնագիտության ու քաղաքականության նկատմամբ գրողի ճանաչողական մտասևեռումի հիմքում: Մուզիլը մշտապես գործառում է իրականության և հնարավորության խիստ վտանգավոր սահմանաբաժանին՝ ընթանալով ասես վիհի եզրին, ամեն վայրկյան ցած տապալվելու սպառնալիքին ակնդետ: *«Ամառային շոգ կեսօրին երկնքից ցած ընկած ձյան փաթիլ»*<sup>1</sup>. «Տոնկա» նորավեպում այսպես է Մուզիլը բանաձևում անարատ հղիություն առեղծվածը, ասել է թե՛ ակնհայտ անհնարիությունը:

Անբացատրելին մեկնելու տենդագին որոնման ճանապարհին մուզիլյան աշխարհայացք է ներխուժում *արտասովորի կարգը՝* որպես տրված իրականության մեջ հնարավորի կամ գուգահեռաբար խաղարկվող *«թեական իրականության»* ներկայություն, որը, չնայած իր պատրանքայնությանը, խարխուլում է իրականություն կոչվածի բացարձակ եզակիության ձգտման հավակնությունը՝ վերջինս հավասարեցնելով պատահականորեն կյանքի կոչված *ընդհատական իրավիճակների դիպվածաշարային պարզագույն գումարի*: Այստեղ է, որ Մուզիլի գլխավոր ստեղծագործության՝ *«Մարդն առանց հատկությունների»* վեպի առանցքային հերոսը հռետորական հարց է տալիս՝ *«Որքանո՞վ է իրական իրականությունը»*, որին

<sup>1</sup> **Ռոբերտ Մուզիլ**, Երկերի ժողովածու, Եր., 2005, էջ 294:

ի պատասխան՝ վեպի առաջին իսկ գլխի շարադրանքից կարելի է եզրահանգել՝ «իրականություն գոյություն չունի», քանի որ, ի վերջո, «ամեն ինչ կարող էր նաև այլ կերպ ընթանալ»: «Այլ կացություն կամ այլակեցություն», կարճ ասած՝ «այլություն»: Ընդամին՝ այստեղ որոշիչ է դառնում մտածողության ընթացակարգի հատաձևականությունը, նրա տարածաժամանակային ուղղվածության բուն իսկ վեկտորայնությունը. «Համաձայնվիր, որ մարդկային ազատությունը գլխավորապես այնտեղ է, ուր դու բոլորից տարբեր ինչ-որ գործ ես կատարում, մինչդեռ մարդկանց մեծամասնությունը միշտ նույն բանն է անում. դրանում մի ինչ-որ անիծված, դժոխային իմաստ է թաքնված, երբ մարդ նույնիսկ տների հատակագծերն էլ միանման է հղանում: Մի անգամ ես մագցեցի զգեստապահարանի վրա միմիայն այն նպատակով, որ մեկ անգամ էլ գոնե ուղղահայաց շարժում կատարեմ, և պետք է խոստովանեմ, որ այն տհաճ խոսակցությունը, որին մասնակցում էի այդ ժամանակ, այնտեղից ինձ բոլորովին մեկ այլ կերպարանքով ներկայացավ»<sup>2</sup>:

«Այն ժամից ի վեր, երբ ես կյանքի համար արթնացա, ես այլ կերպ եմ մտածում իրերի մասին»<sup>3</sup>, այսպիսին է Մուզիլի 1919 թվականից սերող անկեղծ ինքնագնահատանքը: Մուզիլյան այս միտքը նախանշում է նաև, որ մեզ շրջապատող իրերը, բացի այն հույժ ուշագրավ հանգամանքից, որ չգիտես նրանց «իր» կոչես, թե «առարկա», միևնույնն է՝ իրենց ներքին որակներով քողարկված են մնում մեր հոգու աչքից: Իրերը կաշկանդում են մեր գործողությունները, մեր ուշադրությունը գամում իրենց վրա՝ տեղ չթողնելով երևակայության ազատ խաղերին: Նրանք իրենց տիրել-տիրապետելու հրամայական պահանջ են դնում՝ դարձնելով մեզ իրենցից կախված, այլ խոսքով՝ իրենք են տիրապետություն հաստատում մեզ վրա: Ու մենք արտացոլվում ենք անկենդան, ինքնակա իրերի մեջ: Հետևաբար՝ ճանաչել իրերը, նշանակում է ճանաչել ինքներս մեզ: Նույնպես և մարդիկ՝ մեզ շրջապատող առարկայական, որ չասենք՝ իրական ցուլացումներով, միջնորդավորված կապ են հաստատում մեր ու իրերի, մեր ու մեր միջև:

20-րդ դարի երկու աշխարհամարտերի միջև ընկած շուրջ քսանամյա ժամանակահատվածում նա մտած գրում էր իր դյուրաբորբոք կյանքի անավարտ վեպը՝ «Մարդն առանց հատկությունների»: Եթե հետահայաց գնահատելու լինենք Ռոբերտ Մուզիլին և նրա գրականությունը, ապա համառոտակի կարելի է ասել, որ դա գրողի տիտանական մենամարտն է գրքի հետ, որի արդյունքում գիրքը հաղթեց գրող-մարդուն՝ այն հեռահաշվարկով, որպեսզի հավերժության ծիրի մեջ ներառի մարդ-արարչին՝ ստեղծագործողին: Մուզիլը հավատում էր առանց հատկությունների մարդու իր ոգեկոչած իդեալին: Չգտելով խուսափել մարդուն երկրպագելուց՝ փրկության հույսը նա կապում էր նրա անավարտության, հեղհեղուկության, հոսունության հետ: Մուզիլը հայտնագործում և քարոզում է մարդու նոր տեսակը, սկզբունքորեն ո՛չ ամբողջական, բազմատես կամ ամենատես մարդուն, որն ընդունակ է լսելու ուրիշներին և փոխելու սեփական կարծիքը, որը չի՛ պահանջում, չի՛ պարտադրում ոչ ոքի, առավել ևս բոլորին՝ լինել միանման կամ հետևել իրեն: Մուզիլն ինքն էլ ձգտում է ընդլայնելու իր աշխարհատեսությունը, մտահորիզոնը՝ տեսնելու համար օտարը, ուրիշը, որպեսզի գիտակցի ու ճանաչի իրենը:

Այստեղից էլ՝ կյանքը որպես փորձառություն կամ փորձություն դիտարկելու նրա որդեգրած էսսեիստական մոտեցումը, և դրանից բխող՝ հստակամիտ, դատողականությամբ դրոշմակնքված հայեցողականության միստիկական քողը, որը

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 401:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 52:

ներխուժում է ստեղծագործության բոլոր շերտերը հիմնիվեր: Այստեղ ամեն ինչ կա՝ արևելյան միստիցիզմի կարկառուն ներկայացուցիչներից մինչև Յակոբ Բյունե ու Մայքեր Էքհարտ՝ բացահայտ, հաճախ էլ ծպտված աղերսներով: Մուզիլին չի հետաքրքրում իրադարձությունների իրապաշտական բացատրությունը, այլ հոգևոր արխետիպայինը, կեցության տեսիլային, մտահայեցողական կողմը: «Մարդն առանց հատկությունների» վեպում, երկրորդելով Մարտին Լութերին, Մուզիլը կարծում է, որ «որևէ արարքի մասին մեր դատողությունը երբեք դատողություն չէ այդ նույն արարքի այն կողմի մասին, որն Աստված խրախուսում է կամ պատժում»<sup>4</sup>:

Երբ ապրում ես Մուզիլի գծած այն հստակ գիտակցությամբ, որ «հասարակության առաքինությունները բեռ են սրբերի համար»<sup>5</sup>, մանավանդ երբ վստահ ես, որ ցանկացած այլ զգացմունք, բացի անսահմանից, անարժեք է, ստեղծված իրավիճակում մի գերագույն, համընդհանրական գաղափար, ուղեցույց-լապտերի հանգույն, սկսում է ներսից լուսավորել մեծագոր հոգիների մարմնապատյանը, համախմբելով նրանց՝ հանուն միասնական նպատակի, այն է՝ գոյելու միակ հնարավոր եղանակի մուզիլյան մեկ այլ ընդհանրացնող նշանացույցի մատույցներում, համաձայն որի՝ «միայն մեկ հարց գոյություն ունի, որի առթիվ լույս մտածելն է շահեկան, և դա ճշմարիտ կյանքին է վերաբերում»<sup>6</sup>: Քանզի ճշմարտությունը հիմնված է մարդկանց միջև կայացված համաձայնության վրա: Ընդամին՝ կյանքը ենթակա չէ բացատրության կամ արդարացման: «Ինչպե՞ս մենք պետք է ապրենք» հարցի անհավակնոտ պատասխանն է՝ «մենք պարտավոր ենք ապրելու»: Մի խոսքով՝ կյանքն առանց ինչուի:

Գրականությունը համարելով իրականության ճանաչողության բարձրագույն հնարավորությունը՝ նա այն դիտարկում է որպես արտահեղման միջոցով արարչագործված աշխարհի մշտանորոգ ինքնաճանաչողության գերակա աստիճանը: Ընդամին՝ քաղաքականությունը ևս, ըստ նրա, իրականության բազմաթիվ կերպերից մեկն է միայն, պատահականության աստիճանը, այլ խոսքով՝ իրականության հնարավոր կերպավորումներից մեկը, որը հնարավորության պլանում կարող է նաև որպես անհրաժեշտություն ներկայանալ: Մինչդեռ գրականության մեջ պատահական ոչինչ չկա, քանի որ ողջն այստեղ համագոյակից է էությանը: Նույնը վերաբերում է նաև փիլիսոփայությանը, ճիշտ է՝ մասնակի վերապահումով: Գրականությունն ավելին է, քան ժամանակի փիլիսոփաներին հուզող մետաֆիզիկական հարցադրումները: Գրականությունը նույն այդ հարցադրումների ինքնարար, ինքնարարչագործ արտահեղման է՝ առանց դույզն-ինչ պատասխանի ակնկալիքի: Ութեն «առանց փիլիսոփայության ժամանակակից աշխարհում միայն հանցագործներն են համարձակվում խաթարելու մարդկանց առօրյան»<sup>7</sup>, հեզնում է գրողը, սակայն, երբ սկսում ես փիլիսոփայական տրամաբանությամբ առաջ ընթանալ, երբ մի միտքը ինքնին նախորդին է հետևում, ապա վերջում երբեք չես իմանա, թե որտեղ այն կավարտվի: Գրականությունը հենց այդ անավարտության հիմնապատին տպված հոգու սահանկող տրամաբանությունն է:

Ձգտելով դիմակայել հասարակապետական կարգերը պատուհասած և մարդկային հոգիներն աղճատող կործանարար, կազմաքանդիչ, տարամետ խոտորընթացին՝ Ռոբերտ Մուզիլն իր առջև գերխնդիր էր դրել իրար հետ հաշտեցնելու

<sup>4</sup> Robert Musil, Der Mann ohne Eigenschaften (MoE), Bd. 1, Erstes und Zweites Buch, Reinbek bei Hamburg, Rowohlt, 1994, S. 121.

<sup>5</sup> Robert Musil, MoE, I, S. 696.

<sup>6</sup> Ռոբերտ Մուզիլ, Երկերի ժողովածու, էջ 341:

<sup>7</sup> Robert Musil, MoE, I, S. 193.

գեղագիտական, բարոյագիտական, հասարակագիտական և փիլիսոփայական արժեքները, մի ծանրագույն խնդիր, մանավանդ որ դրանց հաշվառումը առանձին-առանձին ո՛չ միայն խիստ դժվար էր, այլև՝ անիրատեսական: Գրական արժեքների պարագայում դա առավել քան անհնարին է, քանի որ գրականությունը լեզվական միջնորդի միջոցով կազմավորում է արժեքի երկտեսակ, այլև երկիմաստ մի միախառնուրդ, ելակետ ունենալով գեղագիտական, էպիստեմոլոգիական և դիսկուրսիվ արժեքները, քանի որ յուրաքանչյուր լեզվական արտահայտություն սեփական հնարավորությունների սահմաններում նպաստավորում կամ վնասում է հասարակապետական դիսկուրսի կազմավորմանը՝ տեղ չթողնելով հասարակական համերաշխության, փոխհասկացողության կայացմանը:

Մուզիլի պարագան ցույց է տալիս, որ կա մի գրականություն, որն այս աշխարհից չէ: Ո՛չ անդրենական կամ հոգեխորթության իմաստով, ո՛չ այն առումով, որ այն չի անդրադառնում այս աշխարհի արդիական, հրատապ խնդիրներին, այլ որ դա արվում է մի այնպիսի եղանակով, որի արդյունքում արդիական հասարակական արժեքները փոխարկվելու պես փոխանցվում, տարանցվում են դեպի իրեն ձգող ուտոպիստական դաշտին, և արդիական լեզուն, որով հասարակությունն է խոսում (լինի ապականված լեզուն, քաղաքական գաղափարախոսությունների, թե համաշխարհային շուկայի կանոններին ենթակայեցված բոլոր արժեքների արհեստածին լեզուն), դուրս է մղվում գրականության ուտոպիստական դաշտից, ձերբազատվում արդիականությունից և դրանով իսկ մաքրվում է ու փրկվում: Մրանով է պայմանավորված նաև Մուզիլի հեռահար պահվածքը, անգամ խորշանքը՝ բարձրարժեք, նույնիսկ գիտականությամբ ներծծված լրագրության և նրա գործածած լեզվի նկատմամբ, բնագավառ, որով ինքն էլ հետևողականորեն զբաղվում էր ընդհուպ մինչև 20-ականների կեսերը, սակայն, սկզբունքային հիմնապատճառներից ելնելով, ստիպված եղավ թողնելու այն: Մուզիլը մինչև վերջ հավատարիմ մնաց իր որդեգրած այն հիմնարար սկզբունքին, որ հեղինակը ոչ այլ կերպ, բայց միայն իր երկի միջոցով է խոսում:

Որպես գրող՝ Մուզիլն իրեն առանձնացնում է իր գրչընկերներից գլխավորապես այն հատկանիշով, որ ինքը, ի տարբերություն ընդունված գրողական աշխարհընկալման, նպատակ չի հետապնդում բացելու իր գիտելիքի ու փորձառության շտեմարանները և որպես ճանաչողական նյութ այն պարտադրելու ընթերցողական ճաշակին, քանի որ ինքը «նվազագույն համահաղորդակցման» կարիքն ունի և առավելագույն լսարան ապահովելու խնդիր բնավ չի դնում: Ընդդիմանալով դեպքերի նկարագրողական, պատմողական սկզբունքին՝ Մուզիլը միաժամանակ պաշտպանում է այն դիրքորոշումը, որ գրողը չպետք է և չի կարող առաջադիմել մինչև ավարտուն փիլիսոփայական համակարգը, և որ իր առջև նա գլխավորապես ինքնաճանաչողական խնդիր է դրել, և այս իմաստով՝ իրեն հատկական գրելաոճը հեզնականն է:

Մուզիլի գրականությունը ծնունդ է առնում գոյության նախասկզբնական, վաղնջական պատկերացումներից, ապա, ինքն իրենից գերաճելով, քննում է մինչարարչական ճիգերից ու գերլարումներից ծնունդ առած դառնալիության նախաձևերն ու կերպերը, որպես և՛ խորքում ինքն իր հետ անհաշտ և անխոնջ տքնանքի մեջ ինքնահաստատող գոյությանը նախորդող անձևությունը, նրա բառերով ասած՝ անկերպարանությունը: Որպես դատողական և զգացական զուգադիր սեռերի արդյունք և արտադրանք՝ Մուզիլի գրականությունն իր տեսակի մեջ անկրկնելի է ու որոշակի առումով՝ դժվարամատույց, եթե ոչ անմատույց: Այն գրականություն չէ բառիս սովորական իմաստով, այլ զգացմունքի ու մտքի մի տեսակ վերընձյուղում,

պտղավորում, հանգուցավորում, ոլորապտույտ՝ զարտուղի ընթացք, իրականության ընկալման գերաճ տված զարգացում... Այս իմաստով՝ գրականությունը Մուզիլի համար և գիրքն ինքնին՝ որպես սևով սպիտակին տալիս շրթայակցում գոյության արտաքին դրսևորումների հետ, հակադրությունն է աշխարհի պատկերազարդ գրքի: Իր ծնունդով այն պարտական չէ ո՛չ նմանակման արվեստին, ո՛չ համաբանության օրենքներին և ո՛չ էլ կրկնակ վերարտադրության երևույթին: «Մարդն առանց հատկությունների» ինքնին իր միջից ի դուրս արտահեղված մի այդօրինակ նյութականացում, առարկայացում է նշանավորում, որն ակնհայտորեն ողջը և ամենայն ինչ իր մեջ ամբարած լինելով՝ շարունակաբար ընդարձակվում է անվերջանալիորեն ինքնամիահյուսվող տարածականության մեջ: Քանզի, ըստ Մուզիլի, գրականության ստեղծագործական պահը ո՛չ թե նրա ձեռնարկած նյութին է վերաբերում, այլ բուն իսկ նյութականացման գործընթացին: Քերթողական ծրագիրն էլ, հետևաբար, «մշտապես տեղի ունեցողի»՝ միջշեական «հավերժական վերադարձի» սիմանական երկվորյակի մշտնջենական կառուցումն է՝ անցումը կարգից դեպի անկարգությունը... և ընդհակառակը: Մարդու ու մարդկայինի պատկերի ներկայացումն այնպիսին է, որ հենց ինքը՝ ստեղծագործողն է դառնում մարդու մասին ուսմունքի պատվիրատուն և բուն իսկ նպատակը, կազմաբանական այն օրգանոնը՝ գործ-գործոցը և նրա միակ ու անփոխարինելի, այլև նույնական հոդաբաշխ միջնորդը:

Փաստականության տիրապետության ոգու, պատճառակցական-մեխանիստական, պոզիտիվիստական մոտեցման վրա խարսխված աշխարհի ընկալման թյուրիմացությունների և մեկնաբանական թերասացությունների արմատը Մուզիլը տեսնում է այն անհամապատասխանության, թյուրհարաբերակցության երևույթի մեջ, որն առկա է դատողականության և հոգու իրարից տարաբաժանված գոյակերպերի միջև, ինչն էլ կազմավորում է այն հիմնական լարվածության օջախը, որի հակադրությանը էլ կառուցվում է մուզիլյան ստեղծագործական ակտի հիմնականաբար ու վերնաշենքը: Նա այսպիսով առարկայացնում, նյութականացնում է մեր մտածողության բնագիտական ու տեխնիկական գիտելիքները: Մտածելու ուժեղագույն իրապաշտությունն արտահայտվում է նախկինում տեղի ունեցածի, կատարվածի վերաիմաստավորման և ներկա ժամանակի հոլովությամբ վերջինիս ինքնուրույն վերաճման ընթացքում: Ընդամին՝ մարդուս մտածողական թերությունը և զգացական անպատեհությունը այն է, որ մեր մտքերի սովորական ուղին ընթանում է ես-ի անջատման միջոցով՝ մի մտքից դեպի մյուս միտքը և մի փաստից դեպի մյուսը: Մենք մտածում ու գործում ենք ո՛չ մեր ես-ի միջոցով: Դրանում է հենց մեր անաչառության՝ օբյեկտիվության էությունը, որն իրերը միմյանց է կապակցում, և ինքն էլ, իրերի հետ մեր հարաբերակցման ընթացքում, մեզ էլ որպես առարկա է ընկալում, ընդամին՝ զանց առնելով անձնավորության, անհատականության գործառույթը... Հենց սրանում է ամփոփված զգացմունքի, կամքի, ապրելու, փոփոխականության հանդեպ առանձին մարդուն պաշարած մշտնջենական հայցազանգաստը, որպես և ընդհանուր մարդկության զանգաստը, ինչն անջրպետում է գիտելիքը, սահման է դնում մեր և գիտելիքի միջև, վերջինս որպես մարդու և մարդկային ցեղի համընդհանրական, մեկընդմիջ տրված անձեռնհասություն կամ պարտություն ներկայացնելով: Հենց դա՛ էլ բոլոր տեսակի միստիկական ուսմունքների ոգեկոչման դրոշապատճառն է, դրոշի ուժը:

Այս հայտնագործությունից, սակայն, Մուզիլը գլխապատառ չի նետվում դեպի ծանծաղ, մակերեսային իռացիոնալիզմը, այլ դեպի բանաստեղծական մտածողությունը, մի բնագավառ, որը գործնականության հողի վրա երաշխավորելու պես

հաստատագրում է այն իրողությունը, որ հենց միայն գրականությունն է ըստ ամենայնի պիտանացու հոգու հարցերում բանականության գործադրման համար: Իսկական, բանիբուն ստեղծագործության՝ բանաստեղծման հիմնական գիծը հետ շրջելու, դեպի մեր մտածողության «սովորական ուղուն» վերադառնալու խնդիր է դնում, պահանջում է վերստին միացնել մեր անձնավորված ես-ը և, հոգեբանության մարզից արտածված հմտություններ բանեցնելու փոխարեն, ի կատար ածել անձնավորությանը հատկաշնորհված այն կենտրոնական, հիմնական աշխատանքը, որն այլևս հոգու ներքնայնությանը, ներքին մարդուն չի թողնում բախտի քմահաճույքին՝ ի շահ ինչ-ինչ մառախլապատ, այլև համընդհանուր ընդունելություն գտած գործածականության, ընդամին՝ ամենուր և համենայնի: Այլապես, զգացմունքի և դատողականության (մուզիկյան բնորոշմամբ՝ բանախոհականության) անհամապատասխանությունը համաշխարհային պատմության մասշտաբով այլևս հնարավոր չէ ուղղել: Ավելին, այն արդեն իսկ հանգեցրել է մետաֆիզիկական համադեպի, ինչն էլ ավերիչ, կազմաքանդիչ արձագանքն է կարգուկանոնի հանդեպ հոգու մշտատև հեղափոխության:

Այդ պատճառով էլ՝ պատերազմների ծագման մշտնջենականությունը, միատիկական հափշտակության համաբանությամբ, կարևորություն, այլև վճռականություն է ձեռք բերում՝ որպես հոգուն հատկական պայթուցավտանգ ակնթարթ, որն ակնբերաբար, ժամանակ առ ժամանակ ոչնչացնում է կեցությունը՝ հոդս ցնդեցնելով այն, միաժամանակ կողքից դիտելով, թե որտեղ և ինչ է նրանից մնում:

Այստեղից էլ բնական անցումը և կենտրոնացումը գոյության խնդրի վրա: Ընդամին, ո՛չ միայն գտագույն անձնականի վրա՝ հայեցողականությունից մինչև անսպասելիորեն այցելող հնարավոր մահվանն ակնդետ, այլև կենտրոնացումը ես-ի ամրոցը դարբնող, այն շաղափող սահմանների պայթեցման փորձառության վրա, որը կապում է մեր էությունը իրերի և այլ մարդկանց էության հետ՝ նախապատրաստելով անցումը դեպի այլ կացությունը կամ այլությունը: Պատերազմների մշտառկայության խնդրից Մուզիլը եզրահանգում է, որ մտացածին, թվացող ուտոպիաները հանկարծակի կարող են իրականություն դառնալ, և հենց այս իմաստով է, որ նա իրականությունը ուտոպիա է հռչակում:

Իրականության գիտակցության համահավասարակշռության խաթարումը անխուսափելիորեն հանգեցնում է լեզվի քննադատությանը: Հոգու և դատողականության անհամապատասխանության խնդիրն այս իմաստով Մուզիլի համար մոդայիկ համեմունք չէ, դեպի որը՝ լեզվի քննադատությանը, գլխապատառ նետվում է նա, այլ, ըստ ամենայնի, հակազդեցություն «անհամեմատելիության» իր այն տեսակետին, որն իբրև հոգեխռովմունք իշխում է աշխարհը զգայելու և հասկանալու միջակայքում՝ հենց այդ անցման պահին: Աշխարհի հետ հարաբերության մեջ մտնելիս զգայական իմացությունները և դատողական գրգիռները ներգործում, ներազդում են որպես հիմնարար, արմատական հուզագրգռություն:

Չզայելու (վերապրելու) և ըմբռնելու մշտառկա գուգադիր խնդիրը կամ գուգակադապարը մարդուս մղում է անդունդի եզրով ընթանալուն: Այդ պատճառով պահերն ու իրավիճակները միշտ էլ կարելի է տարբեր կերպ նկարագրել, մեկնաբանել: Տիրապետող են իրավիճակները, երբ կապակցվածությունը դադարում է գործել՝ չթողնելով, որ մեր կյանքը անթերի և լիակատար արտացոլվի մեր դատողության մեջ: Դրանք այն պահերն են, երբ ընդհատվում է դատողական ու լեզվական աշխարհի մեկնաբանության շարունակականությունը: Այդպիսի պահերին խաթարիչ խոյահարումներ են ի հայտ գալիս վերապրման և հասկացման միջև, որոնք այլևս գուգահեռաբար և հավասար արագությամբ իրար կողք կողքի չեն ընթանում, այլ



կարծես իրար դեմ ընթանալիս լինեն՝ շեղակի կտրվածքով, այնպես, որ հենց որ մենք ինչ-որ բան ենք վերապրում, այն դառնում է անըմբռնելի և հոգեխռովիչ, երբ որ մենք այն բանտել կամ կապել ենք ցանկանում մտքի շղթաներով, մինչդեռ այն, ինչը մարդուն ինքնին մեծագոր ու խորթ է պատկերանում, քանի դեռ մեր խոսքերը հասանելի են նրան, և հենց որ այն մուտք է գործում մեր կյանքի գործողությունների շրջանակի մեջ, այն դառնում է պարզ մի բան և այդպիսով կորցնում է իր անհանգրստացնող էությունը: Աշխարհի հետ հարաբերակցության այս երկիմաստությունը մարդուս առաջ անդունդ է փորում, որն ավելի է խորանում բառերի, խոսքերի դավադիր անգործունակության միջոցով: Ուստի խնդիր է առաջ գալիս կամուրջ կառուցելու սեփական ես-ի և հոգու առջև բացված մունջ ու անբարբառ այդ խորափոսի միջև:

Մարդուս մեջ շրջված, խեղաթյուրված են դատողական և զգացողական սկիզբները: Այն, ինչը մարդուս բանականությունը մղում է դեպի պահի տակ դիտված վայրկենական վերապրումը (տեսա-լսողական պատրանքները), դա բխում է աշխարհի խեղաթյուրված կարգի ընկալումից, որը վերառում է սովորական կողորդինաստների համակարգը և ժամանակն ու տարածությունը դարձնում հավերժության ակնթարթ, ինչը դարակազմիկ է այն իմաստով, որ կասեցնում է աշխարհի ընթացքը և մեր բանական դատողականության կերպը: Սա հարված է աշխարհաճանաչողական փորձառությանը, որը մարդկանց, հանգամանքների և իրերի հանդեպ «դիրքորոշման կատարյալ հակաշրջման» պահանջ է դնում: Այս կերպ իրականացնելով զգայական ու դատողական բանաձևերի տարրալուծման իր ծրագիրը՝ դրանով իսկ Մուզիլի ստեղծագործական, գրական նպատակադրումը միանգամայն դիտարկելի է որպես յուրատեսակ նպաստ աշխարհի պատկերի նորացման և նրանում մարդու պահվածքի նորակերտման հարցում: Սրանից միաժամանակ բխում է, որ նման ստեղծագործական կերպը նաև մեկ այլ անհրաժեշտ խնդիր է առաջադրում, այն է՝ գրականության ընկալման ավելի լավ եղանակի, ընդամին՝ այնպիսի մեկի, որի առաջնահերթ նպատակադրումն այն չէ, որպեսզի պատմականության դիրքերից ստեղծագործությունները խմբավորվեն նրանց հեղինակի շուրջը, և հեղինակներն էլ հատկաշնորհվեն որոշակի ժամանակային հոսանքների, այլ այն, որ եզակիությունները համակարգված մոտեցմամբ որպես հնարավորություն վերամշակվեն: «Միայն այս կերպ դեպի լուսանցքաբեր մղված մարդը ձեռք կբերի մեր զգայականության ու դատողականության սահմանային կորագիծը՝ բոլոր ճանապարհների վերջնակետային միացման գծին ընթերակա, ուր նրանք ընդհատվում են՝ մի պահ վարանելով դեռևս չկատարվածի, չիրագործվածի առաջ»<sup>8</sup>: Սա՛ է Մուզիլի մտածական ուղին դեպի անանցանելի, բայց և՛ անխուսափելիորեն անհրաժեշտը...

Սահմանելով նոր ժամանակների գրականության առարկան՝ Ռոբերտ Մուզիլը, իր ժամանակակից Հերման Բրոխի օրինակով, գտնում է, որ գրականությունը պետք է զբաղվի մարդկային այն խնդիրներով, որոնք, մի կողմից, տարանջատված են գիտությունից, քանզի նրանք որևէ բանախոհական միջամտության համար ընդհանրապես մատչելի չեն և աստիճանաբար մահացող փիլիսոփայական ֆելիետոնիզմին անձնատուր՝ քվացողական կյանք են վարում, մյուս կողմից՝ այն խնդիրներով, որոնց ընկալմանը գիտությունն իր դանդաղկոտ, ճշգրտության ձգտման ճանապարհին դեռևս չի հասել:

<sup>8</sup> Robert Musil, MoE, II, S. 1315.

Լայն առումով՝ գրականությունը Մուզիլի համար զգացական ընկալումների առիթ չէ, այլ գիտություն՝ խստիվ ճանաչողական հավակնությամբ: Նա դառնում է գրող, որպեսզի կարողանա փորձեր դնել գիտելիքի համաշխարհային լաբորատորիայում, փորձեր, որոնց համար գիտությունը պիտանացու չէ: Մուզիլը տարբեր առիթներով գրում է, որ *գրականությունը չպետք է գերծ մնա բնագիտական աշխարհի պատկերից, և նրա այսօրվա առարկայագրկությունը գալիս է նրանից, որ այդ հարցում նա ուշացել է:*

Ինժեներական կրթություն ունենալով և մասնագիտորեն զբաղված լինելով ֆիզիկայի ու մաթեմատիկայի բնագավառի նորություններով՝ Մուզիլը բնավ իր առջև նպատակ չէր դրել և չէր ուզում ֆիզիկայի բնագավառին վերաբերող մի որոշակի, ինքն իր մեջ ներփակ, ինքնակա գիտելիքը ձևել գրականության վրա՝ այդ նույն գիտելիքը գրականության մեջ տեսանելի դարձնելուն ի խնդիր: Նրա համար գլխավորը գրականության մեջ ճանաչողական մոդելների զարգացումն էր: Այստեղ Մուզիլը հակադրվում էր նրանց, ովքեր ձգտում էին գիտության նորագույն նվաճումները սպասարկու դարձնել արվեստի ու գրականության պահանջներին:

Ավելին, գիտության ուժով միջնորդավորված իրականությունն այնպես է փոխհարաբերվում գրականությանը, ինչպես առկան և ուրիշը, այլ խոսքով՝ իրականությունն ու այլությունը: Այսպես էլ Մուզիլի մեծավեպի գլխավոր հերոսի՝ Ուլրիխի ձգտումը կամ դիտավորությունը ևս ըմբերանում է «այլության» կամ «այլ կացության վիճակին»՝ չհայտնագործված երրորդ հնարավորության մի տարատեսակին: Թեականությունը, հարցահարաբերականությունը բոլոր այն պատկերների, որոնք, աշխարհից արտածելով, մենք փորձում ենք ինքներս մեզ համար կազմավորել, Ուլրիխի մեջ ձգտում է առաջացնում դեպի նախասկզբնական, դրախտային վերապրումը: Եթե այդ «այլության վիճակի ուտոպիան» ևս ձախողման է դատապարտված, ապա որոշիչ, ուղղորդիչ է դառնում վերջինիս՝ իբրև մշտատև շարժման նախազգացումը, հանգամանք, որին հետագայում, տասնամյակներ անց վերստին ձեռնարկեց ավստրիացի մեծանուն գրողներից Ինգերթրգ Բախմանը՝ զարգացնելով «ուտոպիատական», անվճռական բնավորության խնդիրը՝ որպես գրականության էական նախադրյալի: Իրականության և հնարավորության, բանախոհության և հոգու, լեզվի և աշխարհի միջև երբեք չփակվող, չավարտվող, չամբողջացող համադրությունը կամ սինթեզը Մուզիլի գեղագիտության մեջ պարզապես հասկացվում է որպես գրականության առաջնիչ ուժ, ինչը հաստատում է նաև գրողի «Ժառանգություն կենդանության օրոք» ժողովածուի նախաբանից դուրս մնացած հետևյալ մեջբերումը. «Քերթությանն է պատկանում էսպես այն, ինչը մարդ չգիտի. ակնածանքը դրա հանդեպ: Պատրաստի աշխարհայեցություն քերթությունը չի հանդուրժում»<sup>9</sup>:

Նիցշեի հետ քննադատական երկխոսության արդյունքում՝ Մուզիլն իր համար բացահայտում է գրականության նշանակությունը. «Գրականության փաստական հիմքը կրկնությունն է: Այն կիրառվում է ծաղրանմանակման եղանակով: Սակայն կրկնությունն արդեն իսկ գործածվում է լեզվական արտահայտություններում և լեզվի ոգու մեջ... Ակներևաբար մարդս անսահմանորեն հազվադեպ է ինչ-որ նոր բան ասում, միայն երբ ինչ-որ նոր բան է ստեղծում (տե՛ս Նիցշեի, Էմերսոնի օրինակները ևն): Նորաստեղծման հասկացությունը պետք է որ մեծագույն կարևորություն ունենա»<sup>10</sup>:

<sup>9</sup> Robert Musil, Nachlass, Digitale CD-Ausgabe, Klagenfurt-Wien, Robert-Musil-Literatur-Museum Klagenfurt, 2005. Mappengruppe II, Mappe II/1 "Handmaterial", II/1/72, Vorwort IV 5.

<sup>10</sup> Robert Musil, Tagebücher, Bd. 1, Hrsg. v. Adolf Frise, Reinbek bei Hamburg, Rowohlt, 1976, S. 913.

Մուզիլ երևութիւն և նրա ստեղծագործությանը խիստ ուշագրավ, հանրագիտարանային առումով ամբողջական գնահատական է տվել նրա գրական վաստակի անվերապահ երկրպագուն, երկրային կյանքում գրողի մշտական ախոյանն ու ծպտված բարերարը՝ Հերման Բրոխը՝ 1939 թ. հունիսի 22-ին Մուզիլի առիթով Լոնդոնի Pen-Club-ին հասցեագրած կարծիք-միջնորդագրում ազդարարելով. «Մեծ վիպասանի ստեղծագործությունը է՛ և բոլոր ժամանակների համար իր ամբողջականության մեջ կմնա՝ որպէս *comédie humaine* - մարդկային կատակերգություն: Ռոբերտ Մուզիլը պատկանում է աշխարհի մասշտաբով բացարձակ էպիքական քերթողների դասին: Նրա Մարդկային կատակերգությունն ընդգրկում է աշխարհն իր ամբողջականության մեջ: Այն հանգամանքը, որ նա այդ աշխարհը ներառել է նախապատերազմական Ավստրիայի համապատկերում, բարձրացնում է նրա իսկ վավերականությունը, քանի որ այդ երբեմնի Ավստրիան մշակութային ամբողջություն է եղել: Չկա՝ ավելի սխալ բան, քան Մուզիլին հատկացնել տեղական՝ ավտոխտոն ավստրիականությանը: Ավտոխտոնությունը նշանակում է միջակություն: Նա, սակայն, իր ավստրիականությունը որպէս կողմնակի, որոշակիորեն անվեհեր նվազեցուցիչ խաղ է իր մեջ կրում. նրա իրական հայրենիքը ոգին է պարզապէս, ընդամին՝ այն ոլորտը, որը ողջ ավստրիականությունից, ինչպէս նաև ողջ եվրոպականությունից անդին է գտնվում: Ավստրիականությունը հեզմանքի նրա ձևն է:

Եվրոպականը, արևմտեվրոպականը նրա ճշգրտությունն է: Նա հավանաբար ամենաճշգրիտ ստեղծագործողն է, ինչպիսին համաշխարհային գրականությունը երբևէ լույս աշխարհ է բերել: Նա բնավ չի հանդուրժում անպարզությունը, անորոշությունը: Իռացիոնալը նա թույլ է տալիս միայն անսահմանի կերպարանքի մեջ, այն է՝ բանականություն անվերջանալի բազմազանեցման տիրույթում, քանի որ նա գիտի վերջինիս աստվածային առաջադրանքի մասին: Նրա ստեղծագործությունը, ըստ այդմ, ինչպէս յուրաքանչյուր իսկական վիպասանինը, արմատականորեն անվերջանալի է: Դրանով ամենից առաջ նա պայթեցնում է արվեստական ամբողջի ողջ բովանդակությունը, դարձյալ իսկական էպիկայի մի նշան, արտիստիզմի բոլոր սահմանները, տարածական տեղայնացումից դուրս լինելով՝ նա կանգնած է ցանկացած ժամանակայինից էլ դուրս: Նա արդեն իսկ ժամանակից դուրս լինելու խորհրդանիշ է, որին և նա ծառայագրվել է: Աքսորը գերմանացի գրողների համար միշտ էլ խորհրդանշական փախուստ է նշանակել իր տարածածամանակային տեղայնացման երկրային կապվածությունից: ...Ռոբերտ Մուզիլը գերմանական ֆիզիոգնոմիան այսուհետ որոշարկելու է արտրից»<sup>11</sup>:

Երրորդ Ռայխին Ավստրիայի միակցումից հետո՝ 1938 թվականին, Մուզիլը կնոջ հետ Վիեննայից արտագաղթում է Յյուրիխ՝ այդ ընթացքում մի կարճ ժամանակ անցկացնելով Իտալիայում: Մուզիլի գրքերի վրա արգելք է դրվում Գերմանիայում և Ավստրիայում: 1939 թվականին, ապահովության նկատառումներից ելնելով, ամուսինները տեղափոխվում են Ժնև: Այստեղ նրանք հայտնվում են ծանրագույն նյութական դրության մեջ, և Հերման Բրոխի կողմից բարեկամաբար տրամադրվող չնչին դրամական օժանդակությամբ, մենության մեջ շարունակում է տքնաջան աշխատանքը «Մարդն առանց հատկությունների» վեպի երրորդ հատվածի վրա: Այստեղ էլ գրողին չի լքում բոլորից լքված լինելու զգացողությունը. «Թվում է՝ իմ կյանքին բնորոշ իրադրություն է. ես գտնվում եմ Ժնևում, և ոչ ոք չի ճանաչում ինձ, արվեստին վերաբերող միջոցառումներին ոչ ոք ինձ չի հրավիրում»<sup>12</sup>:

<sup>11</sup> **Hermann Broch**, Robert Musil und das Exil, Schriften zur Literatur 1, Frankfurt am Main, 1940, S. 96-97.

<sup>12</sup> **Robert Musil**, Tagebücher, I, S. 945. Քաղվածքներ թիվ 33 օրագրային տետրից՝ 1937-1941թթ.:

Հայրենիքից ու գրական միջավայրից օտարված՝ Մուզիլն իր մահկանացուն կնքեց 1942 թվականի ապրիլի 15-ին, շվեյցարական արքայրում, Ժնևի իր բնակարանում, գլխուղեղի կաթվածից:

**А. В. АЛЕКСАНИН — *Литература как высшая возможность самопознания (По следам эстетики Роберта Музиля)***. — Все творчество австрийского писателя и мыслителя Роберта Музиля (1880-1942 гг.), как и его философский роман “Человек без свойств”, представляет из себя единое обозрение литературных и философских концепций, в котором в искусном синтезе эпистемологических и эссеистических компонентов автор отображает, воспроизводит кризисное положение дел современной жизни. В многообразных разрезах и на различных уровнях в творчестве Музиля описывается весьма типичная для времени проблема самопознания, самосознания человеческого “я”. На фоне распада Австро-Венгерской двойной империи иронизируется разлаженная в силу общественных договоренностей заштампованная свойственность — приписываемая человеку целостность, совокупность “свойств”. В этом отношении экспериментальная открытость художественного мышления, которую Музиль характеризует понятием эссеизма, переместив его в онтологическую сферу экспериментальной, “подопытной жизни”, приобретает особую ценность и особое значение, так же как и его проект-концепция мистической утопии. Для выражения философских идей, для их жизненно-зрелищного воплощения, более того, для их преподнесения в силу достоверной доказательности Музиль — обращаясь к услугам художественных обобщений — пошел по более продуктивному пути, в итоге чего исконно философские понятия раздроблены и разложены в гущу художественных образов и словесных видений. Музиль воплощал мыслителя и творческого писателя, в сочинениях которого естествознание, философия и литературное творчество составляют триединство. Здесь мы имеем дело еще и с сугубо фундаментальным, а то и своеобразным и значительным явлением объединения Музилем понятийных и образных систем естествознания, философии и литературы, синтез которых был для писателя непростым делом. При этом — Музиль объявляет литературу высшей возможностью самопознания.